ԾՐԱԳՐԵՐԻ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ

ՀԱՅԿ ԵՆԳԻԲԱՐՅԱՆԻՆ

Հաշվետվություն

ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության ծրագրերի վարչության փորձագետի կողմից 2024 թվականի հունվար 1-ից մարտի 28-ը իրականացված աշխատանքների

- Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի նոյեմբերի 18-ի՝ «Հայաստանի Հանրապետության կառավարության 2021-2026 թվականների գործունեության միջոցառումների ծրագրի շրջանակներում յուրաքանչյուր ամսվա 15-ին և 30-ին ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության կողմից ներկայումս մշակվող կամ պլանավորված ռազմավարական, հայեցակարգային և զարգացման ու համալիր ծրագրերի փաստաթղթերի առաջընթացի վերաբերյալ տեղեկատվության հավաքագրում և ներկայացում ՀՀ վարչապետի աշխատակազմ:
- Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի նոյեմբերի 18-ի N 1902-Լ որոշմամբ հաստատված ՀՀ կառավարության 2021-2026 թվականների գործունեության միջոցառումների ծրագրի՝ 2022 և 2023 թվականների կատարման ժամկետ ունեցող և 30.12.2023թ. դրությամբ չկատարված կամ մասնակի կատարված միջոցառումների վերաբերյալ կատարման իրատեսական ժամանակացույցի հաշվետվության հավաքագրում և տրամադրում ՀՀ վարչապետի աշխատակազմին:
- Վերոնշյալ միջոցառումների շրջանակներում համագործակցություն և նամակագրություն Ռազմարդյունաբերության կոմիտեի, ինչպես նաև Բարձր տեխնոլոգիաների, Շուկայի զարգացման, Կապի և փոստի, Թվայնացման վարչությունների հետ:

- ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության կողմից մշակված Հայաստանի թվայնացման ռազմավարության առաջընթացի վերաբերյալ հաշվետվության և ռազմավարությունից բխող գործողությունների (կամ միջոցառումների) ծրագրի 2022-2023թթ. չկատարված (մասնակի կատարված) միջոցառումների վերաբերյալ տեղեկանքի մշակում և տրամադրում ՀՀ վարչապետի աշխատակազմին:
- Էլեկտրոնային փաստաթղթաշրջանառություն «Mullbery» համակարգում մակագրված գրությունների կատարում:
- Էլեկտրոնային փոստով ստացված նամակների պատրաստում:
- Օժանդակում վարչության ծրագրերի իրականացման աշխատանքներին:
- Այլ հանձնարարականների կատարում:

ԾՐԱԳՐԵՐԻ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ՓՈՐՁԱԳԵՏ՝ **ՀԵՂԻՆԵ ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ**
28.03.2024թ.

Հաշվետու ժամանակահատվածում կատարված աշխատանքները գնահատում եմ

ԾՐԱԳՐԵՐԻ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ
ՀԱՅԿ ԵՆԳԻԲԱՐՅԱՆ 28.03.2024թ.